№ 45 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 1 1903 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 1 № 45

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, մարտի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՒԲԼԱՐԵԱՆԻ

մահվան քառասունքի օրը, Վանքի մայր եկեղեցում տեղի կունենայ պատարագ և ապա հոգեհանգիստ, որին ներկայ լինելու համար հրաւիրվում են հանգուցեալի բարեկամներն ու ծանօթները։

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն շնորհը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տաթևի վանքի կալուածները. Երկու խօսք. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՆՈՐՀ

Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց մեզ Թագաւոր Կայսրի նոր շնորհի մասին, որ պարունակում է իր մէջ դաւանութիւններին, գիւղական կենցաղի և հողատիրութեան, դաւառական վարչութիւնների և պետութեան բարգաւաճման վերաբերեալ հիմնական ցուցումներ։

Համարելով ուղղափառ դաւանութիւնը գերիշխող պետութեան մէջ՝ Թագաւոր Կայսրը հրամայում է, որ անշեղ կատարվեն կրօնական համբերողութեան այն սկզբունքները, որոնք արտօնում են այլափառ և այլակրօն հպատակներին իրանց հաւատի ազատ դաւանութիւնը և պաշտամունքների կատարումը համաձայն այդ հաւատի ծիսակատարութիւններին։

Մենք, հայերս, որ մինչև այժմ վայելել ենք դաւանութեան վերաբերեալ ազատութիւն, Կայսերական նոր յարատևութեան մէջ տեսնում ենք նոր վաւերացում և հաստատութիւն մի խնդրի վերաբերութեամբ, որ մասնաւորապէս և մեր ժողովրդի համար ունեցել է կարևոր նշանակութիւն։

Բարձրագոյն շնորհը յայտնելով, որ համայնական հողատիրութիւնը պէտք է մնայ անխախտ, որ փոխադարձ երաշխաւորութեան ծանր կարգը պէտք է վերացնվի, որ գիւղական կենցաղի օրէնսդրութիւնը պէտք է բարւոքվի՝ բարեհաճում է թոյլատրել, որ այդ օրէնսդրութեան ծրագիրը վերաքննվի տեղական ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Այդ մասնակցութիւնը պէտք է լրացնէ այն թերութիւնները, որոնք կարող էին առաջ գալ տեղական կարիքների և պայմանների անդիտութեան պատճառով։

Տեղական գործողների մասնակցութիւնը ուժեղացնելու նպատակով Բարձրագոյն հրամանը պատուիրում է ծրագրել նահանգական և դաւառական վարչութիւնների այնպիսի կազմակերպութիւն, որտեղ կարողանային տեղական գործողները վարչական մարմինների հետ միասին վարել տեղական գործերը՝ իշխանութեան ղեկավարութեամբ։ Նոյն նպատակով ծրագրվում է հրաւիրել ծխական հոգաբարձութիւնները գործակցութեան հասարակական վարչութեան գործում, ուր այդ հընարաւոր կը լինի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

Երեք ռուբլի

Երբ մեր դրացու տունը կրակ է ընկնում՝ մենք ոչ միայն ինքներս ենք չտապում, այլ և առաջին պատահած մարդուն յորդորում, օգնութեան ենք կանչում հրդեհը հանգցնելու։ Հրդեհը անցած՝ մենք ազատում ենք թէ մեր տունն ու գոյքը, թէ փրկում ենք մեր ընտանիքը սպառնացող վտանգից։

Երբ մեր քաղաքում կամ մեր գիւղի մէջ երևում է խօլերա կամ որևէ վարակիչ հիւանդութիւն, ոչ միայն մարդասիրութեան զգացմունքը, այլ և ինքնապաշտպանութեան բնազդը դրդում են մեզ օգնութեան հասնել հիւանդացածներին, վարակվածներին և որքան հնարաւոր է շուտ խեղդել, արմատախիլ անել մեր մէջ երևացած համաճարակը, որ տարածվելով կարող պիտի լինէր տանել բազմաթիւ զոհեր մեր հասարակութիւնից։

Խօլերայից և ամէն տեսակ վարակիչ հիւանդութիւններից ոչ պակաս, գուցէ և աւելի վտանգաւոր, գուցէ և աւելի սարսափելի է մի ժողովրդի, մի հասարակութեան համար պարապութիւնը և տգիտութիւնը։

Մեր նոյն-իսկ անձնական շահերի տեսակէտից՝ մենք պարտական ենք մեր պարապ ընկերին գործ տալ, մեր տգէտ հարևանին դնել այն ճանապարհի վրա, որ տանում է դէպի ուսում, դէպի գիտութիւն։

Այդպէս են հասկացել և հասկանում բոլոր լուսաւորված ազգերի լուսաւոր և առաջադէմ անդամները։ Այդ իսկ է պահանջում մեր սեփական բարեկեցութիւնը, դրանով իսկ մենք կարող կը լինենք հաստատուն հիմքի վրա դնել մեր ապագայ սերունդների բարօրութիւնը։

Ուսում և գիտութիւն ձեռք բերելու համար մենք ունենք զանազան կարգի դպրոցներ։ Առաջին կարգի դպրոց յաճախում են մեր երեխաների հազիւ քսան և հինգը մի հարիւրից, յաճախում են, և գիտութեան ճանապարհի գրեթէ հէնց սկզբում կանգ առնում։ Աւելի բախտաւորները նրանք են, թէով տասնհինգ մի հարիւրից, որոնք անցնում են երկրորդ կարգի դպրոց և կամ թերատ թողած իրանց կրթութիւնը կամ հէնց աւարտած՝ դարձեալ կանգ են առնում կէս ճանապարհի վրա։ Վերջապէս հազիւ 10% կազմում են այն իւրական բախտաւորները, որոնք երրորդ կարգի, այն է, բարձրագոյն դպրոցի երես են տեսնում։

Հետևանքը.—մեր ընտանիքի, մեր հասարակութեան մեծ ու փոքր անդամների 75%-ը մնում է տգէտ, խարխափում է խաւարի մէջ և... կեանքի մէջ մեզ ամէն կողմից շրջապատող ցաւ և դարդերի վրա աւելանալով մի անբուժելի ցաւ էլ ինքը դառնում մեր գլխին։

Այդ ցաւերի միակ դարմանը, այդ վէրքերի միակ սպեղանին գրադարան-ընթերցարան կոչված հաստատութիւնն է։

Գրադարան-ընթերցարանը մի դպրոց է, որ շարունակում է այն, ինչ թերատ է թողել դարձեալ դպրոցը, մի կրթարան թէ կին թէ տղայ մարդու համար, թէ վաճառականի, թէ պաշտօնաւորի համար, թէ արհեստաւոր, վերջապէս, և թէ ինքնակամ կամ բախտազուրկ պարապների համար։

Կարիք չը կայ, կարծում եմ, մանրամասնօրէն բացատրել գրադարան-ընթերցարանի նշանակութիւնը. կարիք չը կայ նոյնպէս առաջ բերել նրա մատուցած ծառայութիւնները. տուինք նրան դպրոց և կրթական անունը, և բաւական է...

Այժմ դառնանք մեր Շուշի քաղաքի գրադարան-ընթերցարանին, որի կեանքը և յարատևութիւնը կախված է, հաւատացէք ինձ, երեք ռուբլուց. իսկ նրա անդառնալի մահը, որին նա օրէցօր, ժամ առ ժամ սպասում է, կախված է այն բանից, եթէ մենք փոքրոգութեամբ, ժլատութեամբ և բոլոր աշխարհի առաջ դատապարտելի աննամուսութեամբ կը մերժենք նրանից այդ երեք ռուբլին...

Շուշու գրադարան-ընթերցարանը գոյութիւն ունի տարուց վեր. նա ունեցել է նախանձելի անցեալ իր նմանների մէջ. նրա մատուցած ծառայութիւնները մի առ մի թուելը անհնարին է մի սահմանափակ յօդուածի մէջ...

Մի ամբողջ տարի փակ մնալով և յետոյ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան ճիգից վերանուանվելով Շուշու քաղաքային՝ նա, այդ գրադարան-ընթերցարանը ահա երկու տարի է ինչ ծիւրում է իբրև թոքախտաւոր... քաղաքը իր սուղ միջոցներից տարեկան մի անդամ յատկացնելով մի հազարի չափ ռուբլի՝ հազիւ հազ կարողանում է ոչ թէ ոտքի վրա, այլ անկողնի մէջ պահպանել նրան։ Նոր անցած տարվայ վերջին օրը ամենքս ռոպէ առ ռոպէ սպասում էինք, որ մեր այդ հիւանդը կը փչէ վերջին շունչը։ Սակայն վրա հասաւ ներկայ 1903 թուականը և կեանքի մի պատառ նշոյլ ներշնչեց նրան, չը գիտեմ, մի փոքր աւելի երկար տանջելու համար, թէ ընդմիշտ փրկութեան յոյսերով։

Երբեմն ծաղկեալ դրութեան մէջ փայլող, այժմ էլ 5000-ից աւելի կտոր գիրք ու ամսագիր ունեցող գրադարանը անցեալ տարի տուել է ընդ ամենը 26 երեքական ռուբլի վճարող անդամ, մի քաղաքում, որտեղ 26—30—40 հազար ժողովուրդ կայ, ասել է թէ մեզ մօտ, Շուշում, հազար մարդից մէկն է միայն մտածում կամ ցանկանում երեք ռուբլի տալ գրադարան-ընթերցարանի պահպանութեան համար։ Այս պատճառով էլ վերջին երկու տարիների ընթացքում հնարաւորութիւն չէ եղել գրադարանի հարուստ ժողովածուի վրա աւելացնել կայսերական նոր շնորհը նպատակ ունի բարւոքել տեղական կեանքի հիմքը և այդպիսով նպաստել պետութեան բարգաւաճման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Փետրվարի 25-ին Թիֆլիսի դատաստանական պալատում վճռվեցին յօգուտ Տաթևի վանքի Լէյէն, Աղքեանդ, Դաստակերտ գիւղերը և Խաս-Խասիկ հողը։ Վանքի հաւատարմատարն էր Նիկոլայ Ա. Քալանթարեան։

Այսպիսով Տաթևի վանքը ունենում է հետեւեալ գիւղերը, որոնք «գրամօտայով» տալիս են տարեկան այս հարկերը. Տաթև—600 ռ., Տանձատափ—120 ռ., Հալիձոր—251 ռ., Շընհէր—680 ռ., Խոտ—600 ռ., Ղարաքիլիսա—620 ռ., Աղքեանդ 270 ռ., Լէյէն մօտ—200 ռ., Քիրս—80 ռ.։ Դաստակերտը նոր պիտի ունենի «գրամօտայի» մէջ և նրա արդիւնքները յետ պիտի ստացվեն 1880 թուականներից։ Սրանցից Շնհէր և Ղարաքիլիսա վերջնականապէս վճռված են յօգուտ վանքի և ստացվել են նրանց երկրաչափական մակարդակները։ Տաթևի, Տանձատափի և Հալիձորի գործերը վճռված են պալատում և անց են կացել սենատ, որից ըստ պատվում է վերջնական վճիռ յօգուտ վանքի։ Քիրսի գործը նոյնպէս սենատումն է. իսկ փետրվարի 25-ին տարած գործը պէտք է նոյնպէս սենատում վերջանայ։

Բոլոր կալուածների տարածութիւնը մօտաւորապէս 20,000 դեսեատին է, որից անտառների բաժին կընկնի մօտաւորապէս 3,000 դեսեատին։

Բացի այդ՝ օրէնքով ամէն մի կալուածքի 1/3 մասը պատկանում է անմիջապէս վանքին՝ եթէ ամէն մի գլուխ արական սեռից իրաւատէր՝ ունենայ 5 դեսեատին հող։ Այդպիսի հողեր ունենք Ղարաքիլիսայում 400 դեսեատին, որ 1886 թուից մինչև այսօր ոչ մի կոպէկ արդիւնք չէ տուել, այժմ դատով պահանջվում է։ Շնհէրում 1/3 մասից պակաս էլի պահանջվում է դատով. իսկ մնացածների 1/3 մասի պահանջը կը մնայ մինչև վերջնական պլանների ստացումը։

Վանքի կալուածների ջերմ պաշտպան եղել է Ներսէս Հինգերորդի ժամանակ Շերմազանեան, ապա ամենաջերմ պաշտպան Ստեփանոս վարդապետ Մխիթարեան (Աւորպատականի առաջնորդ) և ապա Անանիա եպիսկոպոս Համազասպեան։ Եթէ Մխիթարեան վարդապետը մի քանի տարի էլ մնար իր պաշտօնում՝ վանքի եկամուտները և կալուածները բոլորովին տարբեր կերպարանք կունենային։

Ե. վ. Մ—թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(Նամակ Բագուից)

«Մշակի» № 35-ում տպված էր «Լրագրական երկու ուղղութիւն» վերնագրով մի յօդուած, որի առիթով երկու խօսք եմ ուզում ասել։

Համեմատելով երկու լրագիրներ, «Бакинскія Изв.» և «Баку», յօդուածագիրը հաւատացած է, որ առաջինը դրանցից իր բարձր, անմատչելի յօդուածներով, անբմբռնելի է Բագուի հասարակութեան, դաւառական քաղաքներին, և պատճառաբանում է, որ ամառեղ գրվում է աւելի բարձր խնդիրների մասին, որոնք գուցէ աւելի սազ գային մայրաքաղաքների թերթերում։

Միանգամայն ուրախալի երևոյթ պէտք է համարել Կովկասում, այն էլ Բագուի նման մի խոշոր արդիւնաբերական կենտրոնում, այնպիսի մի լուրջ օրգանի երևալը, որպիսին է «Бак. Изв.», ուր շշոչիվում են, բացի զուտ տեղական հարցերից՝ նաև պետական, հասարակական այնպիսի լուրջ խնդիրներ, որոնք ոչ միայն մայրաքաղաքների, այլ և ամ-

թէկուզ հէնց մի հատ նոր գիրք։

Այս դէպքում ամօթ բառը ես գտնում եմ չատ թոյլ. մի ուրիշ խօսք դուք ճարեցէք, պարոններ...

Վերև ասացի, որ ներկայ թուականը նոր յոյսերով առաջ եկաւ և կեանք խոստացաւ մեր մահամերձ գրադարան-ընթերցարանին։ Այդ յոյսերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի քանի բանիմաց և կարեկից ձայնաւորներ, որոնց ընտրեց քաղաքային դուման իր նիստերից մէկում։ Նրանք յանձն առեցին մեկնել իրանց ձեռները և փող մուրալ. նրանց թուումն է և տողերիս գրողը։

Եւ ահա մենք պարզում ենք մեր ափերը, բաղխում ենք ձեր դռները։ Տուէք, տիկիններ և պարոններ, ով որքան կարող է։ Իսկ երեք ռուբլի տալ կարող են ձեզանից չատ չատերը։

Մենք դիմում ենք ամենքին՝ անխտիր։

Մենք յոյս ունենք, որ մեզ յետ չեն դարձնի դատարկաձեռն։

Մենք յոյս ունենք, որ ոչ միայն մեր քաղաքի բնակիչներից, այլ և ուրիշ քաղաքներում բնակութիւն հաստատած շուշեցիներից չատերը նուիրել անդամ կարող են այնպիսի գումարներ, որոնցով կարելի է կազմել աբօնենտների մի պատկառելի թիւ, յաճախորդների մի ստուար խումբ։

Երեք ռուբլի՝ և գրադարանը կը հարստանայ նորանոր հրատարակութիւններով, և ընթերցարանի սեղանը կը զարդարվի բազմատեսակ թերթերով։

Երեք ռուբլի՝ և մեր ընկերն ու մեր հարևանը ազատված կը լինեն տգիտութիւնից և, մանաւանդ, պարապութիւնից, որ ամէն չարիքի մայր է։

Երեք ռուբլի՝ և մեր նիւթապէս ապահովված գրադարան-ընթերցարանի դռները լայն կը բացվեն և՛ ռուս, և՛ հայ, և՛ Թուրք հասարակութեան առաջ՝ ձրիապէս...

Սերմացան

բողջ Կովկասի համար կարող են օրվայ հարց համարվել։

Մեզ զարմացնում է, որ «Մշակի» պ. յօդուածագիրը հաւատացած է, թէ գաւառներում (Բաքու և այլ տեղեր) կը լինեն միայն անհատներ, որոնք կըմբռնեն այդ յօդուածները։ Ցեռոյ չարունակում է, որ իբր թէ «Бак. Изв.»-ն մեր անմիջական շահերը չէ շօշափում։ Եթէ պարոնը հետևում է այդ լրագրին, ուրեմն պիտի զարմանալ այդ խօսքերի համար։ Մենք միշտ կարող ենք պատահել այդ թերթում լուրջ յօդուածներ, ուր լայն և հիմնական կերպով արծարծվում է «տէրերի» և «ծառաների» դրութիւնը։ Այդ յօդուածներով աւելի ազդու միջոցներ են առաջարկվում, քան այն պալատիվ միջոցները, որ այս կամ այն անհատի դէմ է ուղղված։

Ներկայ ծառայողների կացութիւնը մի կամ մի քանի անհատի ստեղծածը չէ, այլ մի ամբողջ դասակարգի, որը չէ կարող ուղղվել մի Ռուսսէլով կամ երկու հայ ինժենէրով։

Ի նկատի ունենալով այս փաստերը՝ «Бак. Извѣстія»-ն իր լուրջ և ժամանակակից յօդուածներով աւելի օրվայ այրող հարցերին է արձագանգ տալիս, քան «Баку»-ն իր անհատական մերկացումներով։

Զարաչար սխալվում են նրանք, որոնք հաւատացած են, թէ հասարակական կարգերը փոխվում են (այն էլ մեզանում) այս կամ այն անհատի արատները մերկացնելով։

Մենք միանգամայն համակրում ենք, երբ ասպարէզ են հանվում այնօրինակ տիպեր, որպիսին են Ռուսսէլ կամ Հաջի-Զէյնալ. մէկը դրանցից, որպէս սոր միտումներով առաջնորդվող եւրոպացի, միւսը «հռչակված» և «երգված» Կովկասի շատ լրագիրներում յայտնի բարերար, բայց բոլորովին ուրիշ դիմակի տակ։ Բայց ասացէք ինդրեմ, ո՞ւմ կարող է անվերջ հետաքրքրել մի Մաշնիկով, Նեստորով կամ Հաջի. մինթէ նրանց մասին խօսել կը նշանակէ օրվայ հրատապ խնդիրներ չօշափել։ Մինթէ մեր հասարակական կեանքը սահմանափակվում է այս կամ այն անհատի շուրջը, կամ այդ անհատներով իրաւունք կունենանք ամբողջ հասարակութիւնը չափել և նրա համեմատ այդ չարիքի դէմ կռուել։

Մենք ցանկանում ենք իսկական ճանապարհը պատուի և հաւասարութեան. իսկ դա ձեռք կը բերվի՝ եթէ մենք լուրջ վերաբերվենք մեր կեանքում տեղի ունեցող հասարակական երեւոյթներին և նրանց դիմադրենք աւելի հիմնական կերպով...

Բաւական է, ինչքան մենք կերակրվել ենք անհամ, անգոյն ֆրազներով. ժամանակ է, մենք համոզվենք, որ այն մարդիկ, որոնք երկրի աղը պիտի հանդիսանային—միշտ էլ կը մնան մեր երկրի իսկական ցեցեր, եթէ մեր ուղածը միշտ կը լինեն և կը մնան ֆրազներ և ֆրազներ...

Ն. Տէր-Ղազարեան

Բալախանի

—

Խմբագրութեան կողմից։ «Մշակի» № 35-ի մէջ տպված յօդուածը, որի դէմ գրում է պ. Տէր-Ղազարեան, մեր մի թղթակցի կարծիքն է, որ մենք տպագրեցինք, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս Բագուի մէջ գոյութիւն ունեցող ռուս լրագրութիւնը ուշադրութեան արժանի մի երեւոյթ է։ Մենք «Մշակի» մէջ մի քանի անգամ առիթ ենք ունեցել մեր համակրութիւնը և ուրախութիւնը յայտնելու Բագուում անցեալ տարվանից հիմնած երկու ռուս լրագիրների ուղղութեան առիթով։ Եւ տեղ տալով մեր թղթակցի նամակին՝ մենք նպատակ ունէինք արձագանգ տալ այն տպաւորութիւններին, որ թողնում են երկու լրագիրները Բագուում, ընթերցողների վրա։ Մեր թղթակից պ. Տէր-Դանիէլեան երկու թերթերին էլ վերաբերվել էր մեծ համակրանքով, սակայն «Бак. Изв.» լրագիրը համարել էր աւելի ակադեմիական, քան կեանքի հետ անմիջապէս շփվող մի լրագիր, մինչդեռ միւս թերթը «Баку»-ն, ցոլացնում է իր մէջ կեանքը, կռուում է տեղային այլանդակ երեւոյթների դէմ, մի խօսքով աւելի ճիշտ է ըմբռնում հրապարակախօսութեան պահանջները։

Իբրև պատասխան «Մշակի» մէջ տպված այդ յօդուածին, «Бак. Изв.» լրագիրը հրատարակեց իր էջերում Բ. Կ.-ի մի յօդուածը, որի վերջնական եզրակացութիւնն այն է, թէ «Մշակի» գոյութիւնը աւելորդ է։ Մենք, սակայն, չենք հետևի ռուս լրագրի այդ ազանդաւորական նեղսրտութեան և ահա տպագրում ենք մի ուրիշ ընթերցողի նամակը, որ անպայման առաւելութիւնը տալիս է «Бак. Изв.» լրագրին։

Կատարելով անկողմնապահութեան և համբերողութեան պարտքը՝ մենք, սակայն, չենք կարող մի քանի նկատողութիւններ չանել վերև տպված նամակի առիթով։

Նամակագիր պ. Տէր-Ղազարեան «պալլիատիվ միջոց» է համարում այն, որ «Баку» լրագիրը մերկացնում է անհատների արարքները։ Մենք կարծում ենք, որ այսպիսի դատողութիւնը ճիշտ չէ։ Հրապարակախօսութիւնը կարող է ոյժ և նշանակութիւն ունենալ այն դէպքում, երբ նա հիմնվում է օրվայ եղելութիւնների, կեանքի ընթացիկ փաստերի վրա։ Ուստի նրա քննութեան առարկան կարող են լինել թէ ընդհանուր, խմբական երևոյթներ, թէ անհատներ, եթէ այս վերջինների գործերը հասարակական բնաւորութիւն ունեն։ Վերացական, օդային քարոզութիւնները անփառաք դատողութիւնների սահմանից չեն դուրս գայ։ Հարկաւոր են փաստեր, հարկաւոր է մարմին և արիւն ներկայացնող իրականութիւն։ Եւ իզուր է կարծում պ. Տէր-Ղազարեան, թէ անհատները ոչինչ նշանակութիւն չունեն հասարակութեան անարդար կարգերի մէջ։ Նրանք ունեն իրանց նշանակութիւնը, նրանք դրութեան տէրերն են, ոմանք հարատահարողի, ոմանք էլ հարատահարվողի դերերում։ Մերկացնելով անհատներին, մենք մերկացնում ենք և այն ընդհանուր դրութիւնը, որ ստեղծում է այդ անհատներին։ Կան թէօրիաներ, կան և այդ թէօրիաները հաստատող փաստեր կեանքի մէջ։ Փախչել փաստերից, նախապատիւ համարել թէօրիաները—դա չէ իսկական հրապարակախօսութեան, լրագրական հրապարակախօսութեան կոչումը։ Աւելի երկար խօսել այս մասին չարժէ, հարցը չափազանց պարզ է։

Կան երկու տիպի հրապարակախօսներ. մէկը կոչվում է պատերազմող, ռազմիկ. նա համարձակ է, մերկացնում է, տապալում է հասարակութեան կուռքերը, մի խօսքով կռիւ է մղում կեանքի խաւար երևոյթների դէմ յանուն առաջադիմական, հանրամարդկային գաղափարների։ Այս տեսակ հրապարակախօսութիւն մենք տեսնում ենք «Баку» լրագրի մէջ։ Այդ լրագրի գոյութեան սկզբից մինչև այժմ մենք չենք նկատել որևէ վարմունք, որ դէմ լինի գրական ազնուութեան, առաջադիմական գաղափարներին։ Կռիւը, երբ նա մղվում է անմիջապէս կեանքի մէջ և կեանքի խնդիրների շուրջը՝ յաճախ կարող է կրքոտ լինել, յաճախ նոյն-իսկ միակողմանիութեան հասնել։ Բայց այդ յատկութիւնները վնասակար չեն կարող լինել, քանի որ կուռողները միանգամայն չիտակ ու ազնիւ են, շահամոլութեան և այլ թաքուն նպատակների համար չեն կռուում։

Այսպիսի խիստ մերկացնող, ռազմիկ ուղղութիւն չը կայ «Бакинск. Извѣст.» լրագրի մէջ։ Սա նոյն-իսկ «Баку»-ի հակառակորդ է, և մենք չենք կարող մոռանալ այն փաստը, որ «Бакинск. Извѣст. մի տեսակ հեգնանքով էր գրում, թէ իւրաքանչիւր բանսեր կարող է մտնել «Баку»-ի խմբագրութիւնը և յայտնել իր գանգատները։ Չենք ուզում երկարացնել, կասենք միայն այսքանը։ Ով ուզում է Բագուի կեանքի բացասական կողմերի հետ ծանօթանալ՝ նա աւելի «Баку» լրագրին կը դիմէ։ Ուզում էք իմանալ թէ տպագրական ինչ տեսակ խօսքն է ազդում,—իմացէք թէ ո՞ր լրագիրն է մի կողմից թշնամութիւն և ատամների կրճտոց բարձրացնում, իսկ միւս կողմից ոգևորութիւն և անձնուէր գործակցութիւն առաջացնում։ Ուզում էք իմանալ, թէ ո՞ր հրապարակախօսութիւնն է ազդու և իրական,—հարց ու փորձ արէք, թէ ովքեր են դժգոհ մի լրագրից և ովքեր համարում են նրան արդար և ճշմարիտ։

Մի քանի տարի առաջ Բագուում, նաւթարդիւնաբերողների ժողովում, կարդացվեց մի զեկուցում, որ մռայլ գոյներով էր նկարագրում բանուորների դրութիւնը և միջոցներ էր առաջարկում այդ դրութիւնը բարւոքելու համար։ Զեկուցումը մեծ հաճութեամբ լսեցին ժողովին ներկայ ոսկու տոպրակները։ Նրանք էին բանուորների տէրերը, նրանք էին կառուցել Բալախանիի և այլ տեղերի այն սարսափելի «կազարմաները», որոնց մէջ աշխատաւոր դասակարգը, ինչպէս վկայել էր պետական մի բարձրաստիճան բժիշկ պաշտօնեայ, ուղղակի փտում են։ Բայց այդ պարոնները մեծ հաճութեամբ լսեցին իրանց արարքների նկարագիրը, նոյն-իսկ որոտընդոստ ծափահարութիւններով վարձատրեցին զեկուցանողին։ Եւ դրութիւնը, իհարկէ, մնաց նոյնը կրեսոսների այդ հրճուանքից յետոյ էլ։

Ի՞նչ է ցոյց տալիս այս փաստը։

Այն, որ գիտական ակադեմիական շարադրութիւնները կեղեքողների ու աշխարհի իշխանների համար այնքան էլ սարսափելի չեն։ Եւ ահա, աչքի առաջ ունենալով այս փաստը, կարելի է հարց տալ.—արդեօք կարելի է բաւականանալ ակադեմիական շարադրութիւններով, թէ հարկաւոր է ամենօրեայ հրապարակախօսութեան մէջ մերկացնող, մրտարակող, համարձակութեամբ հասարակական կեղտոտ հոսանքների, քուրմերի ու կուռքերի դէմ գնացող ուղղութիւնը։—Մենք համոզված ենք, որ «Бакинск. Извѣст.» լրագիրը, որքան էլ համակրելի, առաջադէմ գաղափարների ծառայելիս լինի, չի ունենայ ընթերցող հասարակութեան մէջ շատ թշնամիներ և անձնուէր բարեկամներ։ Իսկ սա ինքն ըստ ինքեան մի պակասութիւն է։

Կարիք չը կայ բացատրելու, թէ «Մշակը» այդ երկու ուղղութիւններից որին կարող է աւելի շատ համակրել։ «Մշակի» երեսուն տարվայ կեանքը պատրաստած ունի որոշ ու պարզ պատասխան։ Մերկացումը, կռիւը, կեանքի փաստերը լուսաբանելը և մտրակը «Մշակի» ուղղութիւնն են կազմում։

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Փետրվարի 26-ին

Կիրակի, ամսի 23-ին, մեր քաղաքային կլուբի դահլիճում կայացաւ սովորական վրաց երեկոյթը, որը կազմակերպել էր տեղական փոքրաթիւ վրաց գաղութը։ Երեկոյթը ունէր հարուստ ծրագիր, շատ բազմամարդ էր ու հետաքրքրական, կենդանի, աշխոյժ. բաղկացած էր նա ներկայացումից, սօլօ ու խմբական երգերից, երաժշտական մասից, ազգային ու եւրոպական պարերից։ Սկզբում խաղացին Ցագարելու «Խանում» պիեսը տեղական սիրողների ու վրաց բեմի յայտնի ոյժեր տիկին Գարունիա-Ցագարելու ու պ. Աբաշիձէի մասնակցութեամբ, որոնք իրանց դերերում անանման էին։ Ներկայացումից յետոյ շարունակվեցին երեկոյթի միւս մասերը սահմանած ծրագրով ու մեծ կանոնաւորութեամբ, խումբը, ազգային զգեստներ հագած, երգում էր շատ ներդաշնակ վրաց ժողովրդական երգեր։

Վրաց երեկոյթները մեր քաղաքում արդէն սովորական երեկոյթների շարքն են անցել ու շատ յայտնի են։ Կարգադրիչները միշտ դիտեն հետաքրքիր ու գրաւիչ դարձնել նրանց։ Տարին մի անգամ տեղի ունի այդ երեկոյթը. ամեն անգամ դահլիճում շարժվելու տեղ չէ լինում բնաւ, մուտքը յատկացնվում է վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան։ Անխտիր այցելում են վրաց երեկոյթները բոլոր ազգերի մարդիկ, ամենից շատ հայերն ու ռուսները. թէ և քաղաքի բոլոր վրացիները ներկայ են լինում, բայց էլի հայերի թիւը նրանցից շատ է լինում այդ երեկոյթներում, և այդ շատ ուրախալի է երկու ազգերի համերաշխութեան տեսակէտից։ Սակայն նոյնը չեն անում վրացիները՝ երբ հայերէն ներկայացում կամ երեկոյթ է տեղի ունենում. նրանք բնաւ չեն հետաքրքրվում հայերի կազմած հանդէսներով ու չեն այցելում։ Մի կողմ թողնենք տեղական սիրողների ջանքերով կազմակերպած ներկայացումներն ու երեկոյթները, որոնք այնքան էլ գուցէ հետաքրքիր չեն նրանց աչքում, բայց հաւանաբար հայերէն լաւ ներկայացումն անգամ նրանց ուշադրութեան չէ արժանանում։ Անցեալ տարի տիկ. Սիրանոյշի Գանձակում տուած երկու ներկայացումներին համարեա ոչ մի վրացի մեր աչքով չընկաւ։ Այդ խորթութիւնը շատ ցաւալի ու նոյն-իսկ պախարակելի։ Ի սրտէ ուրախ ուրախ լինելով այն բանին, որ հայերը ստուար բազմութեամբ, առանց որևէ խորթութեան, այցելում են վրաց երեկոյթները, ցանկալի է նոյն բանը, նոյն բարեացակամ վերաբերմունքը տեսնել վրացիների կողմից դէպի հայերը։ Տեղական ինտելիրի կողմից դէպի հայերը։ Տեղական ինտելիգենտ վրացիները, որոնց մէջ կան շատ լուրջ, համերաշխութեան համոզված կողմնակից անձնաւորութիւններ, պէտք է այդ բանում նախաձեռնող հանդիսանան, օրինակ տան մնացածներին։

Մենք, հայերս ու վրացիներս, երկնքից աստղեր վէր բերել չենք կարող մեր փոխադարձ ատելութեամբ ու թշնամութեամբ. լաւն այն է, մի ընդհանրական օջաղի շուրջը բոլորած՝ իւրաքանչիւրս մեր տեղն ու մեր չափը ճանաչենք ու իրար ձեռք ձեռքի տուած սիրով, համերաշխութեամբ ապրենք, աշխատենք, առաջ գնանք խաղաղ կուլտուրական զարգացման ասպարէզում...

Գրական-հասարակական, մտաւոր կեանքի երևոյթներով խիստ աղքատ, խղճուկ ու ողորմելի մեր քաղաքի հորիզոնում էլ, մի քանի վրացի ինտելիգենտների շնորհով, նորերս երևաց յայտնի տիրահռչակ գիտաւորը, Վելիչկօի զինակից իշխան Իլիա Զաւչաւաձէի «Աղաղակող քարեր» գրուածքի ռուսերէն թարգմանութիւնը, որը տարածում են այստեղ վրաց ազգը կորստից փրկելու, ամենակեր հայկական վիշապից ազատելու համար... Մի երկու տարի առաջ մի ուրիշ վրացի ինտելիգենտ, գիրք ու ազդեցութիւն ունեցող, տեղիս վրացիների մէջ ստորագրութիւններ էր հաւաքում վրաց ազգի «անձնուէր բարեկամ» Վէլիչկօին ներկայացնելու համար կազմած ուղերձի տակին... Մինչդեռ ընդհանուր առմամբ լաւ յարաբերութիւններ են տարիների ընթացքում գոյութիւն ունեցել Գանձակի հայերի ու սակաւաթիւ գանձակաբնակ վրացի գաղութի մէջ։ Ցաւով ենք, որ տիրահռչակ Վէլիչկօի գաղափարակից Զաւչաւաձէի երկրպագուները հնարաւորութիւն չեն ունենայ չօվինիզմի բացիլները տարածվել Գանձակում շնորհիւ հակառակ ուղղութեան ու աշխարհայեացքի տէր վրացիների, որոնցից կան մեր քաղաքում։

Գանձակի վրացիները օրինակելի պէտք է համարվեն տեղացի հայերի համար իրանց փոխադարձ համերաշխութեամբ ու սերտ, մտերիմ կապերով։ Շնորհիւ այդ համերաշխութեան նրանք կազմակերպում են բազմամարդ երեկոյթներ, վառ են պահում իրանց մէջ ազգային ոգին, ստանում են նրանցից ոչ միայն նիւթական, այլ և բարոյական օգուտներ։ Գանձակի հայերը, որոնց թիւը տասնհինգ հազարից անցնում է, որոնց մէջ ինտելիգենտները հարիւրներով են հաչում հասարակական գործերում, միշտ աչքի են ընկել ու ընկնում իրանց ծայրայեղ անտարբերութեամբ, ապաթիայով, լքմամբ. տարին միջին թւով մի հատ գոնէ կարգին ներկայացում չէ կազմակերպվում, բարոյական օգուտ բերող, նուիրական «դպիլին», գրպանին մի-երկու բուբլու վնաս տուող, բայց սրտին ու մտքին թանգագին մնունդ տուող հանդէս չէ տեղի ունենում։ Սեփականը, հարազատը մօդայում չէ, ուստի և անհետաքրքիր է սատիկ, իսկ ոչ-հարազատը, երբ նա իր վրա կրում է մօդայի զարուարը կնիքը, շատ յարգի է ու անչափ հետաքրքիր... Եթէ տեղի ունեցած վրաց երեկոյթի տեղ նոյն ծաւալով ու ծրագրով կազմակերպվէր հայոց երեկոյթ՝ հաւատացած եմ, որ դահլիճը կիսով չափ դատարկ կը լինէր առնուազն, ու եթէ լցնէին էլ, այդ էլ երկրորդ, երրորդ անտրակտներից յետոյ, առանց տոմսակի, գաղտագողի... ազգասիրաբար... Անտրակտների ժամանակ անտոմսակ մտնելը սովորական բան է հայոց ներկայացումների ժամանակ. շատերը դրանով ազգասիրական մեծ ակտ են կատարում...

Լսում ենք, որ մի քանի հայերի ու հայուհիների մէջ միտք է յղացել այս մեծ պասին հայերէն ներկայացում ու երեկոյթ կազմակերպել վրացիների օրինակով։ Լաւ է ուշ, քան երբէք. հարկաւոր է տարին մի անգամ գոնէ սթափվել լեթարգիական քնից...

Սա. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ, մարտի 1-ին, Վրաստանի էկզարխի եկեղեցում տեղի կունենայ պատարագ և տպա հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր II կայսրի յիշատակին։

—

«Руск. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ Շլիսսէլբուրգի գաւառի Գուտիլով գիւղում փետրվարի 23-ին բացվեց Ալէքսանդր II Ազատարար կայսրի արձանը, որ իրանց ծախքով կանգնեցրել են գիւղացիները, ի յիշատակ իրանց ազատութեան ճորտութիւնից։ Արձանը ներկայացնում է կայսրի բրօնզեայ կիսարձանը՝ գրանիտեայ բարձր պատուանդանի վրա։ Դրված է նա գիւղի ընդարձակ հրապարակում, գիւղական վարչութեան դիւանատան հանդէպ, և շրջապատված է գեղեցիկ վանդակապատով։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ հինգշաբթի, մարտի 6-ին, երեկոյեան 8 ժամին, զինուորական խորհրդի դահլիճում, կովկասեան զինուորական շրջանի շտաբի շինութեան մէջ, տեղի կունենայ Կայսերական Աշխարհագրական ընկերութեան կովկասեան բաժանմունքի անդամների ընդհանուր ժողովը, որի ժամանակ ընկերութեան անդամ լեռնային ինժենէր Շտակ մի զեկուցում կը կարդայ իր ճանապարհորդութեան մասին դէպի Բաչա և Սվանէթիա։

Զեկուցմանը կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք. մուտքը ձրի է։

—

Հինգշաբթի, փետրվարի 27-ին, Թիֆլիսի օպերային խումբը ներկայացրեց «Պայեացներ» օպերան և «Եւգենիյ Օնեգին» օպերայից տեսարան, ուր Տատիանան նամակ է գրում Օնեգինին։ Երկու օպերաներում էլ մասնակցում էր երգչուհի Ինսարովա, որ իր մտածված, խելացի խաղով ու գեղարուեստական երգով մեծ հաճութիւն պատճառեց հանդիսականներին։ Տօնիոյի դերի մէջ հանդէս եկաւ երգիչ Վինոգրադով, որի երգած նախերգանքը հաւանութիւն գտաւ և հանդիսականների պահանջելով կրկնվեց։ Պայեացի դերը կատարեց Սալտօ, օրից հասարակութիւնը յոյս ունէր աւելի լաւ կատարում։ Երգչուհի Արցըբաշեվայի հիւանդութեան պատճառով Ռիգոլէտտո օպերան, որ նշանակված էր այդ օրը, չը կատարվեց և փոխարինվեց «Կարմէն» և «Եւգենիյ Օնեգին» օպերաների երեք գործողութիւններով։

—

Ստացանք Ներսէս Շահլամեանի օգտին մի «ռուբ»-ից 1 ռուբլի։

—

Պետերբուրգի Ռուսաց Այգեգործական ընկերութիւնը, ի յիշատակ Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ յոբելեանի, կազմում է համառուսական ցուցահանդէս, որ կը բացվի ապրիլի 26-ին և կը տևէ մինչև մայիսի 1-ը։ Մօտ օրերումս յիշված ընկերութեան վարչութիւնը դիմեց Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան՝ խնդրելով իր կողմից աջակցութիւն ցոյց տալ յիշված ցուցահանդէսի կազմութեան՝ նշանակելով մեդալներ կամ ուրիշ դրամական պարգևներ էկսպոնենտներին։

—

«Новое Время» լրագրին հեռագրում են Վլադիվոստոկից, թէ փետրվարի 20-ին այնտեղից ճանապարհ ընկաւ առաջին մարդատար գնացքը, որ առանց փոփոխվելու անցնելու է արևելեան-չինական, անդրբայկալեան և սիբիրական գծերով։ Այսպիսով այդ օրվանից սկսվեց Սիբիրի երկաթուղիական մեծ ճանապարհի անընդհատ շահագործումը։

—

Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, 30 միլիոն ռուբլու փոխառութիւն է անում քաղաքային ձիաքարշի երկրորդ խմբի գծերի վերաշինութեան համար։

—

Նոյն լրագիրները հաղորդում են, թէ քրէական յանցանքների պատժագրքի նախագիծը, որ մշակվել է սենատոր Տագանցեվի նախագահութեամբ գործող յանձնաժողովում, ընդունված է պետական խորհրդի կողմից համարեա առանց որևէ փոփոխութեան։

—

ԴԱՐԱՋԻՉԱԳԻՑ մեզ գրում են. «Այս տարի սարսափելի ձմեռ է Դարաչիչագում. չորս ամիս անընդհատ տեղացող ձիւնը այնքան հաստ ու միատաղաղ ծածկել է գետինը, որ շրջակայքում ոչ մի սև բիծ չէ նկատվում։ Ձիւնի շատութեան պատճառով գիւղացիների երթևեկութիւնը ընդհատվել է. սառնամանիքները դեռ ևս շարունակվում են։ Գիւղացիների յուսահատութիւնը չափ չունի. անցեալ ամառվայ երկարատև երաշտութեան շնորհիւ կենդանիների ապուռը սպառվելու է, և շատերինը հէնց միանգամայն սպառվել է. սաստիկ խոտ ու դարմանի թանգութիւն է տիրում գիւղերում, այն էլ, դժբախտաբար, չէ ճարվում ոչ մի տեղ։ Ի՞նչ անէ խեղճ գիւղացին, ինչով կերակրէ իր ընտանիքը։ Թէև փետրվարի 18—19-ից սկսվել է օրը մի քիչ տաքանալ, սակայն ձիւնի հաստութիւնը այնքան շատ է, որ եթէ տաքութիւնը շարունակ մինչև ապրիլ ամսվայ կէսը անէ՝ հազիւ թէ դաշտը սևանայ. իսկ կենդանիների կերակուրը, ինչպէս ասացի, ոչ թէ այդքան ժամանակ, այլ հազիւ թէ մի 20—30 օր բաւականացնէ։ Ուրիշ տարիների պէս, գիւղացիք այնքան յոյս էլ չունեն գարնան աշխատութեան վրա, որովհետև երկաթուղին Երևան գալով՝ թէև մի կողմից զգալի դիւրութիւն տուեց ժողովրդին, բայց միւս կողմից մի շարք ինամներ հասցրեց աղքատ—երկրագործ դասակարգին։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ գրում են. «Կիրակի օր, փետրվարի 23-ին, պատարագից յետոյ մի շատ գեղեցիկ և ազդու քարոզ խօսեց մեր Թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։ Քարոզը շատ լաւ տպաւորութիւն թողեց մեր հասարակութեան վրա։ Շատ կիանալի օրինակներ և մտքեր էին բովանդակվում սրբազանի քարոզի մէջ. այնպէս քաղցր և ազդու ոճով էր արտասանում, որ կարծես ժողովուրդը քարոզի վերջանալը չէր էլ նկատում, ուզում էր դարձեալ լսել։ Շնորհիւ առաջնորդի մենք ունենք մի քարոզիչ քահանայ էլ, Յակոբը Սարիկեանը, որ միւս կիրակի պէտք է քարոզ խօսէ, յետոյ հերթով և միւս քահանաները։ Ամեն կիրակի քարոզ պիտի լսենք։ Սրբազան Սեդրակեանի ներկայութիւնը մեր քաղաքում շատ մեծ սէր ու եռանդ է արծարծել դէպի եկեղեցին, դէպի մեր ազգութիւնը. այսպիսի մի քաղաքում, ուր տիրում են օտար լեզուները, և ոչ մի հայ ընտանիք չէ հետաքրքրվել իր լեզուով առաջնորդը կարողացել է հետաքրքրութիւն զարթեցնել դէպի հայոց եկեղեցին և լեզուն։ Հիմա իւրաքանչիւր հայ ընտանիք ամենայն սիրով զգում է իր մայրենի լեզուի նշանակութիւնը, կամենում է խօսել իր լեզուն, որ մի ժամանակ բոլորովին մոռացված էր. նա ցանկանում է սովորել։ Ահա թէ ինչ նշանակութիւն ունի քաջ անխոնջ հովիւը իր հօտի համար»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Զարեբայ վանքի անտառները յանձնվել են մի տգէտ Վահան վարդապետի։ Զար լեզուները ասում են, թէ Վահան վարդապետը կամենում է այս տարի սինոդի և Թիֆլիսի կօնսիստորիայի մերկացած գանձարանները լցնել դրամով. և ինչպէս, գիտէք. հրաւէր է կարդացել ածխագործներին և փայտհատներին—գալ և մշակել այն անտառը, որը ձեռք է բերել զօռով և կեղծով, իսպառ կորատել անտառը, որպէս զի արօտատեղի դարձնելով—անասնապահութեամբ պարապի։ Սուտ էր, ղորթ էր գիւղացու ասածը, չը գիտեմ, բայց որամադրված լինելով հոգևոր գործերը վատութեան մէջ տեսնելու, ընդունեցի նրա ասածը հաված իւղի տեղ։ Յայտնի է, որ սպանված Աստուածատուր վարդապետը քանի անգամ սենատ է գնացել այդ անտառների համար և գործը տարել. մինթէ կօնսիստորիան քնած է. ինչո՞ւ պիտի իրաւունք տայ մի վարդապետի՝ առանց տոմսակի, առանց ժապաւինեալ մատեանի և առանց կօնսիստորիայի անմիջական գիտութեան փայտ կտրել, ածուխ վառել, տախտակ քաշել։ Դարվինական օրէնքի համար մեր հոգևոր իշխանութիւնը այսօրվայ իր ամբողջութեամբ մի փառաւոր փաստ է, ապացուցանելու, որ կեանքի պայմաններին չը յարմարվող հաստատութիւնները ջնջվում են այնպէս՝ ինչպէս անհամապատասխան կազմ ունեցող անհատները։ Դեռ չեմ խօսում Գանձասարի 70,000 դեսեատին անտառի մասին, որ պետական հարկը տալ չէ կարողանում. այն-ինչ այդ մի մեծ անտառապետութիւն է կազմում և կը տայ տարեկան հաւատարիմ մարդու ձեռքով 20—25 հազար ռուբլի»։

—

Նուխու գաւառի ԴԱՇԲՈՒԼԱՂ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղում տարածված է կարմրուկ հիւանդութիւնը, որից վնասվում են շատ մանուկներ. օր չէ անցնում, որ այդ հիւանդութիւնը մի քանի զոհեր չը տանէ»։

—

ԴԱՐԱՋԻՉԱԳԻՑ մեզ գրում են. «Դարաչիչագը ունի 25 հայ գիւղեր. սակայն ոչ մի տեղ ուսումնարան չը կայ. ոչ տեղական ժողովուրդը այնքան ոյժ ունի, որ իր սեփական միջոցներով չինէ ու պահպանէ ուսումնարանը, և ոչ էլ արտաքին օգնութիւն է հասնում խեղճ թշուառ ժողովրդին... Ահա թէ ինչ դրութեան մէջ է գտնվում մեր Դարաչիչագի բազմամարդ ժողովուրդը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Arménie» լրագիրը բառացի կերպով առաջ է բերում այն բանաձևը, որ ընդունեց Պարիզում յօգուտ Թիւրքիայի հալածված քրիստոնեաների կայացած մեծ միտինգը՝ Անատոլ Լէրուա Բոլիէի առաջարկութեամբ։ Այդ բանաձևը հետևեալն է. «Աչքի առաջ ունենալով ազգաբնակութեան անտանելի դրութիւնը Հայաստանում և այնտեղ կրկնվող սարսափները. աչքի առաջ ունենալով, որ այդպիսի դրութիւնը մի մեղադրանք է հասարակական խղճի դէմ և միևնոյն ժամանակ վտանգ է սպառնում ընդհանուր խաղաղութեան. աչքի առաջ ունենալով, որ միայն Բերլինի դաշնագրի որոշումների կատարումը կարող է վերջ դնել իրերի այդ ցաւալի դրութեան. վերջապէս աչքի առաջ ունենալով այն անխուսափելի պարտաւորութիւնները, որ դնում է Բերլինի դաշնագիրը նրան ստորագրող պետութիւնների վրա,—միտինգին մասնակցող 4000 քաղաքացիներ միաբերան ցանկութիւն են յայտնում, որ Ֆրանսիական կառավարութիւնը եռանդուն գործունէութեամբ գործադրել տայ Բերլինի դաշնագրի 61-րորդ յօդուածը՝ համաձայն 1895 թուականի մայիսի 11-ին Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի կողմից ստորագրված յիշատակագրի, որպէսզի գաղարեն վերջապէս Թիւրքիայի ոճնգութիւնները մարդկային իրաւունքների դէմ, առանց ցեղի, ազգութեան, և կրօնի խտրութեան»։

—Նայելով այն տեղեկութիւններին, որ ստացել են առ այժմ եւրոպական լրագիրները գաղթականութեան վերաբերեալ ամերիկական նոր օրէնքի մասին՝ այդ օրէնքը այնքան էլ խիստ չէ երևում, ինչպէս կարծվում էր առաջ։ Շատ բան, սակայն, կախված է նրանից, թէ ինչպիսի գործադրութիւն կը ստանայ նա իրական կեանքում։ Համաձայն այդ օրէնքի՝ չեն կարող Միացեալ Նահանգները գաղթել 1) յանցաւորները, որոնք գործել են այնպիսի ոճիրներ, որոնց համար Միացեալ-Նահանգներում ևս նշանակված են քրէական ծանր պատիժներ. քաղաքական յանցաւորներին արգելվում է մուտք գործել Միացեալ-Նահանգները միայն այն դէպքում, երբ նրանք գործել են այնպիսի յանցանքներ, որոնք ապացուցանում են նրանց բարոյական ապականութիւնը. 2) ապուշները, հոգեկան հիւանդները և խեղանդամները. 3) այն անձինք, որոնք հիւանդ են որևէ վարակիչ կամ զզուանք յարուցանող հիւանդութեամբ, եթէ միայն այդ հիւանդութիւնները չուսումով չէ կարելի լաւացնել գաղթականական դէպոյի հիւանդանոցում. 4) բազմակիները և այն կանայք, որ գնում են Միացեալ-Նահանգները առատակութեան նպատակով. 5) այն անձինք, որոնք գտնվում են ֆիզիկական այնպիսի դրութեան մէջ, որ յայտնապէս անկարող են իրանք իրանց համար ապրուստ հայթայթել, ուստի և պէտք է ծանր բեռ դառնան հասարակութեան համար, ուրիշ խօսքով «պասպէրները», վերջապէս 6) պայմանաւորված բանուորները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 փետրվարի

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ։ Կայսր Ալէքսանդր Գ-ին Ֆրէդէնսբորգ ամրոցի պարկում արձան դնելու նախապատրաստական աշխատութիւնները սկսվեցին հիմքը գցելով. բացումը տեղի կունենայ մարտի 26-ին, Խրիստոսի թագաւորի ծննդեան 85-դ տարեդարձի օրը։

ՊԷՔԻՆ։ Իւանչիկայ զօրք ուղարկեց բօկսերների դէմ Գօրդէ, որ գտնվում է 100 մղոն հեռաւորութեամբ Պէքինից։ Բօկսէրները ցրված են. 12 հոգի սպանվեցին. գերիներին գլխատեցին և նրանց գլխները ի ցոյց դրին։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը հաղորդեց Աւստրօ-Ունգարիայի և Ռուսաստանի դեսպաններին այն ձեռնարկութիւնների ցուցակը, որոնք իրագործված են մինչև այժմ՝ ընդունված ռէֆորմները մացնելու համար։

ՄԱԴՐԻԴ։ «Heraldo»-ի հեռագրի համաձայն, Մարոկկոում չարունակվում է պատերազմը փոփոխակի աջողութեամբ։ Սուլթանի պատերազմական ոյժերը մեծացան, թէպէտև կաբիլների մի մասը առաջվան պէս պատերազմում է թեկնածուի կողմը։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Վիլլէմստադից ստացված հեռագրի համաձայն, սաստիկ պատերազմ տեղի ունեցաւ Կօրօի մօտ Վենէցուէլական ապըստամբների և կառավարական զօրքերի միջև։ Պատերազմի ելքը անյայտ է։ Յեղափոխական կուսակցութիւնը հաւատացնում է, որ իր որամադրութեան տակ ունի բոլոր արևելեան նաւահանգիստները Օրինոկոի գետաբերանից մինչև Ռիոխիկո։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Գօրդոնը պաշտպանում է Գիատի պահանջը՝ եղած զօրքի թիւը փոքրացնելու մասին և կարծում է, որ Հնդկաստանի պաշտպանութեան համար լաւագոյն միջոցն է ամրացնել այնտեղ զինուորական դիրքերը։ Բօուլս ասում է, որ արդէն Բալֆուրի յայտարարութիւնից յետոյ Կրանբօրն հաղորդեց այն բանակցութիւնների մասին, որ տեղի էին ունենում Անգլիայի և Ռուսաստանի միջև և որոնց նպատակն էր համաձայնութեան գալ փոխադարձ շահերի վերաբերմամբ Պարսկաստանում և Աֆղանստանում։ Դրա մէջն է ամբողջ հարցը։ Եթէ այդպիսի համաձայնութիւն կայանայ՝ այն ժամանակ Հնդկաստան ներս խուժելու դէմ նախազգուշութեան միջոցների անհրաժեշտութիւնը վերացված կը լինի։

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների ժողով։ Կէրբէր կրկնում է Դալմացիայի սլաւօնական պատգամաւորների գանգատների առիթով, որ Ռուսաստանը և Աւստրօ-Ունգարիան միասին պաշտպանում են հանգստութիւնը Բալկանեան թերակղզու վրա. դրանով արտայայտվում է բոլորը, և հէնց դրա մէջն է ընդհանուր հետաքրքրութիւնը։ Երկու մեծ պետութիւնների համաձայնութիւնը՝ կարգը և status quo-ն պահպանելու համար Բալկանեան թերակղզու վրա, որ ընդունվեց ամբողջ Եւրոպայի կողմից ամենամեծ գոհունակութեան զգացմունքով, խօսում է ինքն իրան։ Դալմացիայի սլաւօնական պատգամաւորները պարտաւոր են աշխատել յօգուտ իրանց երկրի զարգացման, որին կառավարութիւնը ամեն կերպ աջակցութիւն ցոյց կը տայ։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Սօցիալիստ Սեմբա ցանկութիւն է յայտնում, որպէս զի Դէլկասէ նպաստէ Հաագայի միջնորդ դատարանի նշանակութեան բարձրացման։ Ֆրանսիան պարտաւոր է դաշնագիր կապել Անգլիայի, Իտալիայի և Սպանիայի հետ, որպէսզի ապագայում այդ պետութիւնները պարտաւորվին յանձնել Հաագայի միջնորդ դատարանի լուծմանը բոլոր ծագող տարաձայնութիւնները։

ԲԵՐԼԻՆ։ «Kölnische Zeitung» լրագրին հաղորդում են Վարշայից, թէ Դանեվ յայտարարել է, որ մինիստրական կրիզիս չը կայ, և կաբինետը չէ ցանկանում Պարիկովի հրաժարականը, այլ միայն պահանջում է, որ նա թոյլ չը տայ օֆիցէրներին իրանց համակրութիւնն յայտարարել դէպի Մակեդոնիան, որպէսզի որևէ առիթ չը տրվի կասկածելու կառավարութեան անկեղծութեան մասին։ Զինուորական մթերքներ գնելու ենթագրութիւնը ցանկալի է համարված առժամանակ յետաձգել։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Telegraph»-ին հաղորդում են Նիւ-Եօրկից, թէ երեկ պետական դէպարտամենտում, ամերիկական հանրապետութիւնների դիպլոմատիական ներկայացուցիչների ներկայութեամբ, տեղի ունեցաւ նախկին սենատոր Դէվիսի զեկուցումը այն երկաթուղային գծի ծրագրի մասին, որ պէտք է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները միացնէ Հարաւային Ամերիկայի ցամաքի հետ։ Գիծը սկսվելու է մեկսիկական երկաթուղային ցանցի հարաւային ծայրից և Միջին Ամերիկայից անցնելով պէտք է հասնէ Բոլիվիա և անցնէ Արգենտինայի, Պարագվայի և Ուրուգվայի միջով։ Մատդրութիւն կայ գծից ճիւղեր տանել դէպի Բրազիլիա և Չիլի, գուցէ նաև Կոլումբիա և Կարակաս.

ԼԻՍԱԲԲՕՆ։ Անգլիական թագաւորն այստեղ կը գայ մարտի 21-ին, չորս օրով։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Զինադադարութեան հարցի առիթով Դէլկասէ բացատրում է, թէ Ֆրանսիային չէ պատկանում նախաձեռնութիւն ստանձնել այս հարցում, յամենայն դէպս ինքն իր վրա չի վերցնի։ Ինքը ուրախութեամբ կողջունէր՝ եթէ Հաագայի միջնորդ դատարանի ազդեցութիւնը լայնանար, ընդարձակվէր. սակայն իր իրաւունքների պաշտպանութիւնը որևէ մեծ պետութիւն կարող է ապահովել՝ միմիայն նեցուկ ունենալով հզօր զինուորութիւն։ Մակեդոնիայի առիթով Դէլկասէ յայտնեց, թէ Ֆրանսիան վաղուց արդէն աշխատում է համոզել Թիւրքիային, որ ռէֆորմներն իրագործէ։ Եւրոպական հաւասարակշռութիւնը պահպանելու համար Ֆրանսիան պարտաւոր է շարունակել այն քաղաքականութիւնը, որին հետևում է երկար ժամանակներից ի վեր։ Այս քաղաքականութեան խոհեմութիւնը առաջ բերեց դաշնակցութիւն Ռուսաստանի հետ։ Բիբօ բացատրում է, թէ Ֆրանսո-ռուսական դաշնակցութիւնը կազմում է Ֆրանսիական քաղաքականութեան ամենայուսալի հիմունքներից մէկը։ Ճառախօսը ցանկանում է սրտագին յարաբերութիւններ ունենալ Անգլիայի հետ և համաձայն է, որ այդպիսի յարաբերութիւններ պէտք է լինեն և Գերմանիայի հետ, առանց սակայն Ֆրանսիայի յոյսերից հրաժարվելու. ինքը համակիր է այն դիրքին, որը բռնել է Դէլկասէ մակեդոնական հարցում։ Վիճաբանութիւնները վերջանալուց յետոյ միաձայն ընդունվում է հերթական հարցերին անցնելու բանաձևը, որով հաւանութիւն է յայտնվում կառավարութեան բացատրութիւններին։

28 փետրվարի

ԲԵՐԼԻՆ։ «Norddeutsche Zeitung» նկատում է մանիֆէստը իբրև նոր ապացոյց Կայսր Նիկոլայի բարձր գաղափարի մասին դէպի իր պարտաւորութիւնը՝ ժողովրդի բարիքի վերաբերմամբ, և աւելացնում է, թէ Թագաւոր Կայսրի Թագաւորութեան մարդասիրական բնաւորութիւնը պերճախօս արտայայտութիւն է գտնում՝ օտարահաւատների վերաբերմամբ հանդուրժողութիւնը ընդգծելով, և հաւատացնում է, որ Գերմանիայում անկեղծ համակրութեամբ կը հետևեն մեծ խաղաղ գործի աջողութեանը և բարգաւաճմանը։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրքական աղբիւրներին նայելով՝ քաղաքական յանցանքների համար դատապարտված 800 բոլգարներից 600 հոգի, որոնք բանտարկված էին և պէտք է Փոքր-Ասիա աքսորվէին, ազատ արձակված են։ Սերես ու-

զարկված մասնաժողովը պարտաւորվում է նպաստել Բոլգարիայից վերադարձող գաղթականներին՝ նրանց կործանված տները վերականգնելու գործում։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Այստեղ հասաւ, Նոր-Սիբիրեան կղզիներից վերադառնալով, կենդանաբան Բելինիցկի-Բիրուլի, որ մասնակից էր բարոն Տոլի արշաւախմբին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Ֆինլանդական լրագրում» հրատարակված է Բարձրագոյն հրամանի մասին, որով ժամանակաւորապէս սահմանվում է, որ Ֆինլանդիայում զինուորագրութեան ատեանների նիստերը օրինաւոր կը համարվեն՝ երբ ամեն մի նիստին ներկայ լինեն նախագահը և Իրկու անդամ, իսկ ծառայութեան ենթարկվելիք անձերի բժշկական զննութեան և վերազննութեան՝ մի բժիշկ։

«Правительственный Вѣстникъ»-ում հրատարակված է Անուանական Բարձրագոյն հրովարտակ Ֆինանսների մինիստրին՝ պայմանաժամից առաջ հանգցնելու 1890—1892 թուերի երկաթուղային միացրած փոխառութիւնների և 1893 թուի ներքին փոխառութեան 4½% պարտամուրհակները, և նրանց փոխարինելու պետական 4% հասոյթի վկայագրերով, նոյնպէս և Ֆինանսների մինիստրի կարգադրութիւնը՝ այս նախաժամանակ հանգուցման կարգի և պայմանների մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարտի 7-ին 1903 թուի նշանակված է Թիֆլիսի Ժողովարանի անդամների ընդհանուր ժողովը՝ մի քանի տնտեսական հարցեր քննելու և քուէարկելու։ ասագների և քննիչ յանձնաժողովի անդամների թիկնածուներին, նոյնպէս և այն անձանց, որոնք առաջարկված են անդամների կանդիդատներ։

(1 և 6 մ.) 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ա. ԱՀԱՐՈՆԵՍՆԻ

ՄԱՅՐԵՐԸ

(Պատմուածք)
Գինն է 15 կոպ.

Դիմել՝ Գուտենբէրգ գրավաճառանոցին հեղինակին. Тифлисъ, Редакція „Мурчъ“. և 9—10

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բեբուտովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 62—150

Խնդրում եմ յարգելի Ծխողներից,

որ բարեհաճին գործածել Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի սեղանական ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹԸ, ի սէր 1000-է աւելի պատսպարեալների։ Վերջերս Բաթումում այս թուղթի կեղծն դուրս եկած լինելով յարգելի ծխողների և մանաւանդ վաճառողների ուշադրութիւնն եմ հրաւիրում, որպէս զի իւրաքանչիւր տուփերի վրայի մաքսային պլոմբը նկատի առնեն։ Կեղծերը այդ չունեն. թղթի տեսակը վատ է և թերթիկները քիչ են։ Իսկականը ծախում եմ սովորականից էժանացրած գներով։

Մեծ քանակութեամբ և թէ քիչով գնել ցանկացողները կարող են դիմել իմ հացէին.— Батумъ, Магазинъ Ембергеляна,Ованесу Есаяну. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ա. Ց. ԱՄՄԱՆԻ

ԱՐԻՒՆ

(Քրդական բարքերից)
Գինն է 10 կ.

Գտնվում «Գուտենբերգ» գրախանութում։ 4—5

ՄՈՒՐՃԱՑԱՆԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

որոնք զանազան ժամանակներում լոյս են տեսել հայոց պարբերական թերթերում, ներկայ 1903 թուականից սկսած՝ հետզհետէ կը հրատարակվեն

10 առանձին հատորներով,

որոնցից իւրաքանչիւրը բաղկացած 450—600 երեսից, կը պարունակէ իր մէջ հետևեալ երկերը՝

Ա. ՀԱՏՈՐ.

I Նոյի Ադաւը
II Առաքելոցը
III Խորհրդաւոր Մարմնաւորումն

Բ. ՀԱՏՈՐ.

I Գէորգ Մարզպետունի (պատմ. վէպ)

Գ. ՀԱՏՈՐ.

I Անդրէաս երէց (պատմ. վէպ)
II Վահան Գողթնացի (պատմ. վէպ)

Դ. ՀԱՏՈՐ.

I Հայ բողոքականի ընտանիքը
II Իմ կաթոլիկ հարևանցուն
III Զը'հաս է.

Ե. ՀԱՏՈՐ

I Հարուստը զուարճանում է
II Հասարակաց որդեգիրը
III Իմ երջանկութիւնը
IV Անպատճառ իշխանուհի
V Մթթէ վայել է.

Զ. ՀԱՏՈՐ.

Մանրապատում.
I Հանելուկը լուծվեց
II Հին ազգասէրի գաղտնիքը
III Պակների բողոքը
IV Երէկ և այսօր
V Տիկին Փիլարետի վիշտը
VI Ինչու՞ իմ ստորագրութիւնը չընդունեցին
VII Ցատուկ թղթակիցը
VIII Խոյի-վանքում
IX Երկուսից որը
X Մարդ՝ մտադիր, կինը՝ կարգադիր
XI Ծպահանջ
XII Գթութեան քոյրեր

Է. ՀԱՏՈՐ.

I Լուսաւորութեան կենտրոնը ա. և բ. մաս.

Ը. ՀԱՏՈՐ.

I Լուսաւորութեան կենտրոնը գ. և դ. մաս

Թ. ՀԱՏՈՐ.

I Թատերգութիւններ
II Զանազան բանաստեղծութիւններ.

Ժ. ՀԱՏՈՐ

I Իմ տեսած աշխարհը.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

առաջին 6 հատորների համար, որոնց բոլորի գինը՝ կանխիկ վճարելի—6 րուբլի։ Տպագրութիւնից յետոյ՝ 9 րուբլի։

Վերջին չորս հատորների համար ստորագրութիւն կը բացվի՝ առաջին 6 հատորները լոյս հանելուց յետոյ։

Ստորագրվել ցանկացողները կարող են դիմել Թիֆլիս՝

1) Հեղինակին՝ Ղորղանեան փ. № 3.
2) Կենտրոնական գրավաճառանոցին։
3) «Վումայի» խմբագրութեան։

3—3

Զգուշացէ՛ք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՈՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէները, սեւութիւնը, դեղին բծերը, պուղիկները եւ պռուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թուի համար։

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ գեղագործական մագազիններում եւ դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ադմուրովի մօտ, գեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մուրինովի եւ Գրիմակի, պ.պ. Պոպովների եւ Արիստակովի մօտ։ (1, 15) 4—24

Լոյս տեսաւ
Մ. Վ. ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻ

ИСТОРІЯ ПЕРЕВОДА БИБЛІИ НА АРМЯНСКІЙ ЯЗЫКЪ

С.-Петербургъ, 1902. Цѣна, 3 руб.

Վաճառվում է Թիֆլիսում կենտրոնական և Գուտենբէրգ գրավաճառանոցներում և էջմիածնում՝ հեղինակի մօտ։ 4—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. Մ. Խան-Աղեան

Ընդունում է հիւանդներին 9—2 և 4—6 ժ. Երևանեան հրապարակ, տուն Խարագեանի № 3։ (Կ. և. հ.) 41—100

ԲԱՑՎԱԾ Է

1903
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան, III տարի)

Խմբագրութեան անդամների և աշխատակիցների նոյն կազմով։

1903 թուին «Մուրճում» տպվելու է, ի միջի այլոց Ա. Անարոնեանի մի նոր մեծ վէպ «Մրրկի Սուրբը», շարունակվելու է Լէօի «Հայոց Գրականութիւնը», թարգմանվելու են Ա. Ա. Ուսլէսի «Հրաշալի Դարը» և Զոլայի վերջին՝ «Ճշմարտութիւն» վէպը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.—Ռուսաստանում տարեկան 10 ր. Արտասահմանում 12 ր.
» կէս տարին 6 » » 7 »
» 1 ամսվանը 1 » » 1 » 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել. ԹԻՖԼԻՍՈՒՄ—Խմբագրատանը (Ճավճավաձեան փ., տ. № 16)։ Կայարութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtch»

Բացի այդ, «Մուրճին» կարելի գրվել նաև՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ—«Գուտենբէրգ» գրավաճառանոցում։ ԲԱԼԱԽԱՆԻ—պ. Մ. Տէր-Իսահակեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. գործարանում։ ԲԱԳՈՒ. «Պրոմէթէոս» ընկերութեան գրավաճառանոցում, Կրասնովոդսկայա և Տօրգովայա փողոցների անկիւնը, տ. Ամիրովի և պ. Ն. Դաւթեանի մօտ, Շահգիդանովի պասաժ, «Վասակ» ընկերութեան գրասենեակում։

Մանրութիւն. Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարանում են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել միանուագ, կարող են տալ մաս-մաս, սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յուլիսի 1-ին 2 ր.։

Խնդրում են ձեռագիրները և նամակները ուղարկել խմբագրութեան՝ Լեւոն Սարգսեանցի անունով։

!!ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻ Ց!!
ԵՂԲ. Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

որը գտնվում է Գոլովինսկի պրոսպէկտի վրա, I գիմնազիայի հանդէպ,

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ՄԻՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹՈՎ

այն է փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ը

ԶԸ ՏԵՍՆՎԱԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Անցեալ տարվայ ամառային և ձմեռվայ սեզոններից մնացած տղամարդկանց, կանանց և երեխայոց հագուստների, որոնք առանձնացրած են միւսներից և վերջնական գները նշանակված էտիկէտների վրա կպցոյ մատիտով։

Ստացել ենք արտասահմանեան և ռուսական ամենայայտնի գործարաններից, մեծ քանակութեամբ զանազան տեսակ տրիկոներ և մանուդներ։

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ, ծախում ենք նաև արշինով։

Ստացել ենք և շարունակ ստանում ենք եւրոպական ամենավերջին տարազով կարված տղամարդկանց և կանանց հագուստներ և վերնազգեստներ։

Գների արժանութեան կողմից չունի ոչ մի մրցող։ 7—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջին հատոր

(477+VIII երես, 14 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի ԵՐԵՔ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (կը լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները)։

Առաջին հատորը բաղկացած է երկու մասից. I) Արծրունիների տոհմը. II) Գրիգոր Արծրունու ուսանողական տարիները (գրական գործունէութիւն մինչև «Մշակը»)։ Երկրորդ հատորը մամուլի տակ է։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագինն է երեք հատորի համար ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ, ճանապարհածախսով ՉՈՐՍ ՐՈՒԲԼԻ։ Կարելի է վճարել և մաս-մաս, այն է 2 ռուբլի բաժանորդ գրվելիս, իսկ մնացածը՝ երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ։

Նրանք, որոնք կամենում են ունենալ գրքերը կազմերի մէջ, վճարում են ՄԻ ՐՈՒԲԼԻ երեք կազմի համար։ Դրսի քաղաքներից կազմած օրինակներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհածախս 20 կոպէկ՝ պօստային փաթեթի համար։

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտենբէրգ» գրավաճառանոցում, Լօրիս-Մէլիքեան փողոց։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳԻՌՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Ծատուրովի գրասենեակում։

Կարսի Հայոց Հոգեւոր Կառավարութեան Ատեան

Առում էրկրորդ անգամ նշանակված է առաջիկայ մարտի 3-ին, ցերեկվայ ժամը 12-ին Ա Ճ Ո Ի Ր Դ և 5-ին Կ Ր Կ Ն Ա Ճ Ո Ի Ր Դ կապալով տալու Ղաշվանքի «Տայլար» անուանված 600 դեսեատին հողերը, որին մասնակցել ցանկացողները պայմանների մասին դիմելու են նոյն Ատենին։

4—10 Անդամ կառավարութեան՝ Խորէն քահանայ Ստամբոլցեան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԿՈՒՄ։, կարամէլ «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» և սահմանակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Գտնուում է Գաւլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռաձայն № 862, գործարանական խանութինը № 772։

98—100

Дозволено Цензурою. Тифлисъ, 28 Февраля 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванкская ул.